ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2012-14 ԹԹ.

ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012-14 ԹԹ. ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԵՐԻ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2007թ.-ի հոկտեմբերի 30-ի թիվ 344Ն որոշման Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ են ներկայացրել 2012-14թթ. գործարար ծրագրերը, որտեղ ներկայացված են իրենց կողմից մշակված ռազմավարությունները, ինչպես նաև հիմնական ցուցանիշների կանխատեսումներն առաջիկա երեք տարիների համար:

ԵՐԵՎԱՆ 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ *3*

2.ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 2012-14 թթ. ՀԱՄԱՐ *5*

3.ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *6*

4.ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ *7*

5.ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ *9*

6.ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2011-2014թթ. ԸՆԹԱՑՔՈՒՄ *10*

7.ՎԵՐԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ *20*

8.ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ *19*

9. ՀԱՎԵԼՎԱԾ 1 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2011-14ԹԹ. ՀԱՄԱՐ *22*

10. ՀԱՎԵԼՎԱԾ 2 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ 2011-14ԹԹ. ՀԱՄԱՐ *23*

ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունների կողմից հիշատակվել են 2011թ.-ի ընթացքում տեղի ունեցած մի շարք իրադարձություններ, որոնք որոշակիորեն ազդել են ընկերությունների գործունեության վրա, այդ թվում.

- *2010թ-ի մայիսի 18-ին ՀՀ ԱԺ-ի կողմից «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» մասին օրենքի ընդունում*: Օրենքի ընդունումով պայմանավորված՝ ապահովագրական ընկերությունները 2011 թվականի հունվարի 1-ից սկսեցին իրականացնել լայնածավալ ապահովագրություն՝ հիմնականում գործակալական ցանցերի միջոցով: Որպես հետևանք՝ մի քանի անգամ աճեցին ապահովագրավճարները և հատուցումները: Հատկանշական է, որ ԱՊՊԱ-ն ընկերությունների մոտ խոշոր վնասներ չի առաջացրել:

- *Համաշխարհային ֆինանսական ճգնաժամին հաջորդող հետճգնաժամային փուլ: Բացի ԱՊՊԱ-ի ներդրումից* 2011 թվականին նկատվել է ակտիվություն գույքի, ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների, առողջության ապահովագրության դասերում: Նշված զարգացումները հանդիսացել են ապահովագրական ընկերությունների կողմից հավաքագրվող ապահովագրավճարների աճի պատճառ՝ որպես հետևանք վարկավորման ծավալների ընդլայնման:

- *Տարածաշրջանում տնտեսական և քաղաքական անկայուն մթնոլորտ:*

- *Ընկերությունները փաստում են, որ հիմնական գործընկեր վերաապահովագրական ընկերությունները չեն ունեցել ֆինանսական խնդիրներ և չեն վերանայել վերաապահովագրական սակագները, ինչը նպաստել է, որ ապահովագրական սակագները մնան անփոփոխ:*

- *Որոշ ապահովագրական ընկերությունների և բանկերի խիստ փոխկապակցված վարքագիծ,* ինչը պայմանավորված է բանկերի և ապահովագրական ընկերությունների միևնույն հոլդինգի մեջ լինելու կամ շահերի միևնույն կենտրոնն ունենալու հետ:

- *Որոշ բանկերի և վարկային կազմերպությունների կողմից որպես գրավ ընդունած անշարժ և շարժական գույքը չապահովագրելը,* ինչի հետևանքով բանկերը վարկառուներից լրացուցիչ գումարներ են ստացել ապահովագրման ենթակա ռիսկերն իրենց վրա վերցնելով, իսկ ապահովագրական ընկերությունները զրկվել են իրենց կանխատեսումների համաձայն համապատասխան չափով ապահովագրավճարներ ստանալու հնարավորությունից:

- *Միացումների արդյունքում գործող ապահովագրական ընկերությունների թվի կրճատում և ընկերությունների միջև մրցակցության սրացում:* 2011 թվականի ընթացքում 1 ընկերություն փոխանցել է իր ապահովագրական պորտֆելն այլ ընկերության, ինչի հետևանքով փաստացի դադարեցրել է ապահովագրական գործունեությունը, իսկ լիցենզիան հետ է ուղարկվել Կենտրոնական բանկ: Ընկերությունների թվի կրճատումը և խոշորացումը, ինչպես նաև ԱՊՊԱ օրենքի ընդունումը առաջ է բերել մրցակցության սրացում և 2011 թվականին ապահովագրական շուկայում որոշ ընկերությունների

մասնաբաժինն ավելացնելու ագրեսիվ քաղաքականությունն ազդել է մնացածների մասնաբաժնի կրճատման վրա:

- *Որակյալ մասնագետների շարունակական համալրման պահանջ:* Ի տարբերություն նախորդ տարիների 2011թ.-ին արված կանխատեսումներում նշվում է, որ ապահովագրական շուկայում ավելանում են որակյալ մասնագետները և ընկերությունների կադրային քաղաքականությունը բարելավվում է, չնայած դրան որակյալ մասնագետների նկատմամբ պահանջարկը շարունակում է մնալ բարձր: Կադրերի խնդիրներն ապահովագրական ընկերությունները հիմնականում լուծում են երիտասարդ մասնագետներ ներգրավելով և նրանց համար ներքին վերապատրաստումներ կազմակերպելով:

- *Կազմակերպական կառուցվածքի փոփոխություններ:* Ընկերությունների աճը և ԱՊՊԱ-ի մուտքը, ինչպես նաև կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրումը պահանջում են, որպեսզի ընկերությունները փոփոխեն կազմակերպական կառուցվածքը:

- *Առողջապահության ոլորտում ֆինանսական հոսքերի անվերահսկելիությունն ու թափանցիկության բացակայությունը,* որոնք խոչընդոտներ են ստեղծում առողջության ապահովագրության լայնածավալ իրականացման համար:

- *Պետական ծառայողների՝ սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրության ներդրում:* ԱՊՊԱ-ի օրենքի հետո ապահովագրական շուկայի համար նոր հնարավորություն է առողջության ապահովագրության ընդլայնումը 2012 թվականի ընթացքում: Ընկերությունները մշակել են սակագնային ծրագրեր և նախատեսում են ակտիվորեն մասնակցել նշված ապահովագրության ներդրմանը:

- *Ապահովագրական գործունեության բնականոն ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ համակարգչային ծրագրային ապահովվածության անկատարությունը:*

- *Հավաստի վիճակագրական տվյալների բացակայությունը,* ինչը խոչընդոտ է հանդիսանում ապահովագրական սակագների ճշգրիտ և հիմնավոր որոշման, ինչպես նաև ապահովագրության նոր դասերի (մասնավորապես՝ առողջության ապահովագրության) ներդրման համար:

- *Ապահովագրական ոլորտի նկատմամբ ազգաբնակչության տեղեկացվածության բարձրացումը,* ԱՊՊԱ-ի ներդրմամբ: Չնայած նշված հանգամանքին ապահովագրական ոլորտի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը դեռևս բավարար չէ:

- *Ապահովագրական սակագների նվազման միտումները,* ինչը սակայն երկար չի շարունակվի, քանզի ընկերությունների գնահատմամբ կիրառվող սակագներն արդեն իսկ հասել են իրենց թույլատրելի նվազագույն սահմաններին, իսկ որոշ ընկերությունների կողմից սակագների նվազման միտումները հանդիսանում են մրցակցության սրացման արդյունք:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 2012-14թթ. ՀԱՄԱՐ

Ապահովագրական ընկերությունների նպատակներն, ըստ էության, փոփոխությունների չեն ենթարկվել և հիմնականում համընկնում են 2011-13թթ. գործարար ծրագրերով ֆիքսված նպատակների հետ: Փոփոխություններ են կրել նպատակների առաջնահերթությունը և կարևորությունը: Դրանք են՝

- հաճախորդների սպասարկման ցանցի ընդլայնում և կատարելագործում,
- նոր շուկաների գրավում,
- ընկերության կազմակերպական կառուցվածքի փոփոխություն և կատարելագործում,
- կառավարման արդյունավետության բարձրացում, ընկերության գործունեության ներքին կանոնակարգման համակարգի բարելավում, ներքին վերահսկողության, ռիսկերի կառավարման համակարգերի ներդնում,
- ընկերության ֆինանսական կայունության բարձրացում կանոնադրական կապիտալի ավելացման, ինչպես նաև ստացված շահույթի վերաներդրման միջոցով,
- ակտիվ մարքեթինգային (այդ թվում՝ գովազդային) քաղաքականության իրականացում,
- դիրքերի ամրապնդում տեղական ապահովագրական շուկայում,
- շահութաբերության ապահովում,
- նոր ապահովագրական պրոդուկտների մշակում և ներդնում, ինչը կպահանջի, մասնավորապես, տնտեսության նոր նպատակային հատվածների հետազոտում,
- մատուցվող ապահովագրական ծառայությունների որակի բարձրացում, ապահովադիրների հետ առողջ և թափանցիկ հարաբերությունների ձևավորում և պահպանում,
- հայցերի կարգավորման արդյունավետության բարձրացում,
- ապահովագրական գործունեության համար անհրաժեշտ ծրագրային համակարգի ներդրում և արդեն ներդրված համակարգերի կատարելագործում,
- ապահովագրական և վերաապահովագրական պորտֆելների դիվերսիֆիկացիա,
- ներդրումային քաղաքականության իրականացում դիվերսիֆիկացված և իրացվելի պորտֆելի միջոցով, ակտիվների կառավարման արդյունավետության բարձրացում,
- գործընկերների հետ կապերի խորացում, պետական մարմինների հետ համագործակցություն,
- վերաապահովագրության քաղաքականության զարգացում, վերաապահովագրողների հետ համագործակցության ամրապնդում և ընդլայնում,
- կադրերի աշխատանքի արդյունավետության բարձրացում ի հաշիվ աշխատանքի արդյունավետության գնահատման, խրախուսման և տույժերի մեխանիզմների մշակման և կիրառման, նաև կադրերի վերապատրաստման և որակավորման ստուգման մեխանիզմների կիրառման միջոցով,
- մասնաճյուղերի ստեղծում, գործակալական ցանցի ընդլայնում և կատարելագործում՝ ընկերության ծառայությունները առավել հասանելի դարձնելով մարզերում,
- ինտերնետ կայքերի պատշաճ շահագործում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրական ընկերությունները ծառայություններ են մատուցելու ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, առողջության, ցամաքային տրանսպորտի, հրդեհից ու բնական աղետներից գույքի, փոխադրվող գույքի (բեռների), երկաթուղային տրանսպորտի, ընդհանուր պատասխանատվության ապահովագրության գծով, ինչպես նաև դժբախտ պատահարներից, աջակցության, վարկի և օդանավերի ապահովագրության գծով[1]: Կանխատեսվող ժամանակահատվածում ՀՀ ապահովագրական շուկայում ներդվում է վարկի ապահովագրությունը:

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության օրենքի ընդունմանը զուգընթաց, ապահովագրական ընկերությունները ակտիվ գործողություններ են ձեռնարկել նաև մարզերում, և Երևանի՝ որպես թիրախային կենտրոնի դերը նվազում է: Ընկերությունների մի մասը նախատեսում են մասնաճյուղերի ստեղծում, իսկ մյուսները՝ գործունեության ծավալում գործակալական ցանցի միջոցով:

Ապահովագրական ընկերությունների հիմնական մասը որպես հաճախորդ թիրախային խմբեր է ընտրում ֆիզիկական անձ ապահովադիրներին: Այլ ընկերություններ շարունակում են շեշտը դնել իրավաբանական անձ ապահովադիրների վրա: Ըստ էության, ապահովագրական ընկերությունների հաճախորդներն են հանդիսանում տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպությունները, պետական մարմինները, միջազգային կազմակերպությունները, բանկերից և վարկային կազմակերպություններից վարկ վերցնող քաղաքացիները, արտերկիր մեկնող ուղևորները, ԱՊՊԱ օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ նաև ավտոտրանսպորտային միջոցների բոլոր սեփականատերերը: Հաճախորդների խմբերին 2012 թվականին կավելանան նաև պետական ծառայողները՝ իրականացնելով առողջության ապահովագրություն սոցիալական փաթեթի շրջանակներում:

Ներկայումս ապահովագրական ընկերությունները մեծամասամբ նախընտրում են օգտվել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հուսալիության չափանիշներին բավարարող վերաապահովագրական ընկերությունների ծառայություններից: Ապահովագրական ընկերությունների ներկայիս հիմնական գործընկերներ են հանդիսանում ֆրանսիական Սքոր, լեհական Պոլիշ Ռե, սլովենական Սավա, գերմանական Մյունիխ Ռե, Հանովեռ Ռե, ռուսական Ինգոսստրախ, Ռոսնո, Ալյանս վերաապահովագրական ընկերությունները, ինչպես նաև Լլոյդս ապահովագրական շուկայի սինդիկատներ, միջազգային վերաապահովագրական շուկայի առաջատար բրոքերներ և այլն: Ապահովագրական ընկերությունների գերակշիռ մասը հիմնականում համագործակցում է անգլիական ու եվրոպական շուկայի վերաապահովագրողների և բրոքերների հետ: Ապահովագրական ընկերություններն օգտվում են նաև տեղական բրոքերների ծառայություններից, որոնք նրանց մատուցում են վերաապահովագրական միջնորդի ծառայություններ:

[1] «Հիմնական ցուցանիշների փոփոխությունը 2011-14թթ. Ընթացքում» գլխում ներկայացված են ապահովագրության տվյալ դասի տեսակարար կշիռներն ընդամենը դասի մեջ տարբեր ցուցանիշների գծով:

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ապահովագրական ընկերությունների կանխատեսմամբ 2011-13թթ. ընթացքում իրենց գործունեության վրա հնարավոր ազդեցություն կարող են ունենալ հետևյալ երևույթները.

- *Ընկերությունների մի մասի մոտ կա մտավախություն, որ ֆինանսական ճգնաժամի երկրորդ ալիքը՝ հասունացող պարտքային ճգնաժամը, կարող է ազդել ՀՀ ապահովագրական շուկայի վրա:* Որպես ճգնաժամի ամենահավանական ազդեցություն դիտարկվում է տրանսֆերտների նվազումը: Երկրորդ մասը կանխատեսում են համաշխարհային և ՀՀ տնտեսության աշխուժացում, իսկ երրորդները կանխատեսում են, որ առաջիկայում ՀՀ տնտեսությունում և մասնավորապես՝ ապահովագրական համակարգում կտրուկ փոփոխություններ չեն լինի,

- *փոխարժեքային տատանումներ,* որոնք բացասական ազդեցություն կարող են ունենալ ընկերությունների շահութաբերության վրա,

- *որոշ վերաապահովագրողների վարկանիշերի հնարավոր ցածրացում*՝ հաշվի առնելով տնտեսական ճգնաժամի ազդեցությունը որոշ խոշոր վերաապահովագրողների վրա, *(մասնավորապես՝ մի շարք ընկերություններ կանխատեսում են վերաապահովագրողների կողմից առաջարկվող սակագների աճ, որոշ ընկերություններ՝ նվազում), ինչպես նաև վերաապահովագրողների կողմից առավել խիստ պայմանների հնարավոր առաջադրում՝ կապված հատկապես վերջին տարիներին բնական և տեխնածին աղետային ռիսկերի տեղի ունենալու հավանականության մեծացմամբ,*

- *հայտնի վերաապահովագրողների կողմից ՀՀ ապահովագրական շուկայի նկատմամբ հետաքրքրության առաջացում*՝ պայմանավորված նոր շուկաների ներգրավման գործընթացով,

- *տեղական ապահովագրական ընկերությունների կողմից նոր վերաապահովագրողների հետ հարաբերությունների հաստատում*,

- *ՀՀ ԿԲ-ի կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերի գործարկման հետ կապված դժվարություններ, մյուս կողմից՝ նշված ակտերի գործարկման արդյունքում ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացում և ռիսկերի առավել հուսալի կառավարում,*

- *ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության օրենքի ընդունման դրական հետևանքներ*. բոլոր ընկերությունները փաստում են, որ օրենքի ընդունումը բարձրացնում է բնակչության իրազեկության մակարդակն ապահովագրության ոլորտում և խթանում է ապահովագրական շուկայի զարգացումը,

- *Ընկերությունների ոչ ապահովագրական բնույթի գործառնական ծախսերի նվազում:* 2011թ.-ին կազմել են վաստակած ապահովագրավճարների ընդամենը 35%-ը[2], ինչը զարգացող երկրների ապահովագրական շուկաների համար բավականին ցածր ցուցանիշ է: 2014-ին կանխատեսվում է, որ հարաբերակցությունը կկազմի 28%՝ բարձրացնելով արդյունավետության մակարդակը,

[2] Ոչ ապահովագրական բնույթի՝ գործառնական ծախսեր / վաստակած ապահովագրավճարներ հարաբերակցությունը կոչվում է *ծախսատարրության ցուցանիշ*, որի բարձր արժեքը ներկայացնում է ապահովագրական համակարգի անկատարությունը, իսկ ցածր արժեքը վկայում է արդյունավետության բարձր մակարդակի մասին:

- *2012թ.-ից իրականացնելով պետական ծառայողների առողջության ապահովագրություն սոցիալական փաթեթի շրջանակներում՝* կբարձրանա ապահովագրական ընկերությունների սոցիալական դերը,

- *մրցակցության սրացում,*

- *շուկայի կենտրոնացում և ապահովագրողների խոշորացում,* գործող փոքր ապահովագրական ընկերությունների քանակի նվազում ի հաշիվ սրվելիք մրցակցության և նորմատիվային խստացումների,

- *որոշ ընկերություններ կանխատեսում են նոր մրցակիցների մուտք տեղական ապահովագրական շուկա, իսկ որոշ ընկերություններ դա համարում են քիչ իրատեսական՝ պայմանավորված ֆինանսական ճգնաժամով,*

- *շինարարության և ներմուծման նախկին ծավալների վերականգնում և աճ,* ինչի արդյունքում կաճեն որոշ դասերի գծով ստացվող ապահովագրավճարները (օրինակ՝ փոխադրվող գույքի (բեռների), ավտոտրանսպորտային միջոցների, դժբախտ պատահարներից, առողջության և այլն),

- *բժշկական ծառայությունների գների հավանական աճ,* ինչը կարող է առողջության ապահովագրության սակագների աճի պատճառ հանդիսանալ,

- *ֆինանսական հաշտարարի ինստիտուտի գործունեությունը,* որը դրական ազդեցություն կունենա ապահովագրական շուկայի զարգացման, ապահովագրական ծառայությունների նկատմամբ հասարակական պահանջարկի մեծացման վրա,

- *ապահովագրական սակագների նվազում՝* մրցակցությանը դիմակայելու համար,

- *առավել արդյունավետ վերահսկողության իրականացում վերահսկողական նոր ինստիտուտների ձևավորմամբ, մասնավորապես՝ արդեն իսկ գործող «Հայաստանի ավտոաապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության շնորհիվ,*

- *պարտադիր ապահովագրության ներդրմանը զուգահեռ որոշ ինստիտուտների/համակարգերի ներդրում:* Ակտուարական համակարգի ներդրման հետ կապված հիմնական խնդիր կարող է հանդիսանալ ակտուարական հաշվարկների համար օգտագործվող վիճակագրական տվյալների ոչ բավարար ճշգրիտ լինելը,

- *որակյալ մասնագետների նկատմամբ պահանջարկի աճ,*

- *վնասաբերության ցուցանիշի աճի միտում,* մասնավորապես՝ ավտոտրանսպորտային միջոցների և առողջության ապահովագրության գծով,

- *կյանքի ապահովագրության զարգացում կենսաթոշակային բարեփոխումների շնորհիվ,*

- ընկերություններում առկա ծրագրային խնդիրների լուծման արդյունքում ապահովագրական ծառայությունների մատուցում ինտերնետի միջոցով:

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Ապահովագրական ընկերությունների կողմից նշված *հնարավորություններն են*՝

- ՀՀ տնտեսության կանխատեսվող շարունակական աշխուժացումը և բանկերի կողմից տրամադրվող վարկավորման ծավալների կանխատեսվող աճը,
- Հասարակության գիտակցության մեջ ապահովագրության դերի և կարևորության արմատավորումը,
- Պետական ծառայողների՝ սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրության ներդրման հաշվին ընկերությունների պորտֆելի կտրուկ աճ,
- հնարավոր է, որ զարգացած երկրների ապահովագրական շուկաների կրճատումը ստիպի վերաապահովագրողներին նոր շուկաներ ներխուժել, ինչի արդյունքում անգամ այն վերաապահովագրողները, որոնք նախկինում հետաքրքրված չեն եղել հայկական շուկայով կարող են ընդունել վերաապահովագրության տեղական ռիսկերը,
- օրենսդրության խստացման, մրցակցության սրացման հետևանքով ապահովագրական ընկերությունների թվի կրճատում, առկա ապահովագրական ընկերությունների կողմից նոր մասնաբաժինների տիրանալու հնարավորություն, առողջ, արդյունավետ և ֆինանսապես կայուն ապահովագրական ընկերությունների հաստատման հնարավորություն,
- ակտուարների ինստիտուտի ներդրման հետևանքով ընկերությունների ընդհանուր ռիսկայնության նվազում և պորտֆելի կառավարելիության բարձրացում:

Ապահովագրական ընկերությունների կողմից նշված *սպառնալիքներն են*՝

- գնաճի նախատեսվածից բարձր տեմպեր՝ ինչը կարող է հանրությանը ստիպել ավելի զուսպ լինել ծախսերի տեսանկյունից,
- հետճգնաժամային երևույթների ազդեցություն ՀՀ տնտեսության վրա, տնտեսական աճի դանդաղ տեմպ,
- տարածաշրջանի տնտեսական և քաղաքական անկայունություն,
- փոխարժեքի տատանումների հետ կապված ռիսկեր,
- նորմատիվային դաշտի խստացում,
- որակյալ և փորձառու մասնագետների բացակայություն,
- բժշկական ծառայությունների հավանական գնաճ,
- նոր ապահովագրական ընկերությունների մուտք և դրա հետևանքով մյուս ընկերությունների մասնաբաժինների նվազում,
- ագրեսիվ մրցակցություն գործող ապահովագրական ընկերությունների միջև,
- ապահովագրության մի շարք դասերի գծով ապահովագրավճարների նվազում՝ պայմանավորված տնտեսական աճի տեմպի նվազմամբ, գույքի և ավտոտրանսպորտային


միջոցների ապահովագրության՝ պայմանավորված բանկերի կողմից վարկային վարկավորման պայմանների խստացմամբ,

- SS համակարգի բացակայության պայմաններում ՀՀ ԿԲ կողմից ապահովագրության պայմանագրերի ռեգիստրի պահանջների կիրառումը և հաշվետվությունների ներկայացման հետ կապված ժամկետային խստացումներ,
- ապահովագրական պատահարների, այդ թվում՝ խարդախության աճը,
- առողջապահության, վիճակագրության և ապահովագրության ոլորտների միջև աշխատանքների համակարգման արդյունավետ մեխանիզմների բացակայություն,
- կախվածությունը արտասահմանյան կապիտալից:

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2012-14 ԹԹ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀՀ Ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները

Գծապատկեր 1: ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները



Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը, 2012-14 թթ. ընթացքում 2011թ. համեմատ, կավելանա 66%-ով և կկազմի 36.8 մլրդ դրամ: Նշված աճը վկայում է ֆինանսական համակարգում ապահովագրական ընկերությունների ակտիվության աճի մասին: Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող մյուս ցուցանիշը՝ ապահովագրավճարներ / ՀՆԱ հարաբերակցությունը 2014թ. դեկտեմբերին կկազմի 0.78%[3]: Ինչ վերաբերում է բնակչության մեկ շնչին ընկնող ապահովագրավճարներին, ապա այս ցուցանիշը 2014 թվականի դեկտեմբերին կկազմի 11,511 դրամ՝ մոտենալով զարգացող երկրների միջին ցուցանիշին[4]:

[3] 2010թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով ապահովագրավճարներ/ՀՆԱ ցուցանիշը միջինում կազմել է 3.57%, զարգացող երկրներում՝ 1.32% (աղբյուրը՝ Swiss Re, sigma No 2/2011, May 2011):


[4] 2010թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերությամբ երկրներում մեկ շնչին բաժին է ընկնում միջինում 529,896 դրամ կամ 1,458 ԱՄՆ դոլար ապահովագրավճար, զարգացող երկրներում՝ 17,627 դրամ կամ 49 ԱՄՆ դոլար ապահովագրավճար (աղբյուրը՝ Swiss Re, sigma No 2/2011, May 2011):

Ընդհանուր կապիտալ

Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալը երեք տարվա ընթացքում աճելով 5.1 մլրդ դրամով՝ 2014թ.-ի վերջին կկազմի 19.0 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորված կլինի չբաշխված շահույթի կանխատեսվող 72.8% միջին տարեկան աճով: Հարկ է նշել, որ եթե 31.12.2011թ.-ի դրությամբ ընդհանուր կապիտալի կառուցվածքում կանոնադրական կապիտալը կազմում է 82.6%, իսկ չբաշխված շահույթը՝ 11.0%, ապա 2013թ.-ին դրանց տեսակարար կշիռները կանխատեսումների համաձայն կկազմեն համապատասխանաբար 53.3% և 41.4%:

Ընդհանուր կապիտալի փաստացի և կանխատեսվող կառուցվածքները 2011 և 2014թթ.-ի վերջի դրությամբ ներկայացված են գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2: Ընդհանուր կապիտալի կառուցվածքը 2011 և 2014թթ.-ի վերջի դրությամբ:



Կապիտալի համարժեքություն


Կապիտալի համարժեքության նորմատիվը երեք տարվա ընթացքում կաճի 21.5 տոկոսային կետով՝ 31.12.2014թ. կազմելով 213.5%, որը պայմանավորված է չբաշխված շահույթի աճով: Ապահովագրական ընկերությունները կանխատեսվող ժամանակահատվածում չեն նախատեսում շահաբաժինների լայնածավալ վճարում՝ գերադասելով ամրապնդել կապիտալիզացիայի մակարդակը:

Ակտիվներ

Ապահովագրական ընկերություններն ակտիվների գծով կանխատեսում են 10.3% միջին տարեկան աճ, ինչի արդյունքում ակտիվների մեծությունը 3 տարվա ընթացքում կավելանա 10.8 մլրդ դրամով՝ 31.12.2014 թվականին կազմելով 42.2 մլրդ դրամ: 31.12.2011թ. դրությամբ ակտիվների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում բանկերում ավանդներին (47.3%), բանկային հաշիվներին (4.6%), արժեթղթերին (ներառյալ ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերին) (16.4%) և ուղղակի ապահովագրության ու համաապահովագրության գծով ստացվելիք գումարներին (7.9%): Կանխատեսվում է, որ բանկերում ավանդները, ապահովելով տարեկան միջինում 12.4% աճ, 31.12.2014թ. կկազմեն 21.1 մլրդ դրամ կամ ակտիվների 49.9%-ը, արժեթղթերը, ապահովելով 20.2% միջին տարեկան աճ, կկազմեն 8.9 մլրդ դրամ կամ ակտիվների 21.2%-ը, իսկ ուղղակի ապահովագրության ու համաապահովագրության գծով ստացվելիք գումարները, նվազելով տարեկան միջինում 3.2%՝ կկազմեն 2.2 մլրդ դրամ կամ ակտիվների 5.3%-ը:

Ակտիվների կառուցվածքը որոշ չափով կփոխվի. եթե 2011թ. վերջի դրությամբ ապահովագրական ընկերությունների ուղղակի ապահովագրության ու համաապահովագրության գծով ստացվելիք գումարները կազմում են 7.9%, իսկ արժեթղթերը (ներառյալ ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը)՝ 16.4%, ապա 2014թ. վերջի դրությամբ կանխատեսվում են համապատասխանաբար 5.3% և 21.2% տեսակարար կշիռներ:

Գծապատկեր 3: Ապահովագրական ընկերությունների ակտիվների դինամիկան 2011-2014թթ. համար:




Տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների կառուցվածքում առանձնակի փոփոխություններ տեղի չեն ունենա: Ինչպես 2011թ.-ի վերջին, այնպես էլ հաջորդ երեք տարիների ընթացքում ապահովագրական ընկերություններն իրենց տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների 90%-ից ավելին պլանավորում են տեղաբաշխել հիմնականում ՀՀ տարածքում գործող բանկերում որպես ժամկետային ավանդներ (31.12.2014 թ.՝ մոտ 68%) և ՀՀ պետական արժեթղթերում (մոտ 26%):

<u>Պարտավորություններ</u>

Պարտավորությունների գծով ապահովագրական ընկերությունները կանխատեսում են 9.8% միջին տարեկան աճ՝ 2014թ.-ի վերջին կազմելով 24.2 մլրդ դրամ, ինչը 5.7 մլրդ դրամով ավել է 2011թ.-ի վերջի ցուցանիշից: Պարտավորությունների կազմում մեծ մասը 2011-14թթ.-ին շարունակելու են կազմել տեխնիկական պահուստները: Ընդ որում՝ եթե 31.12.2011թ.-ի դրությամբ տեխնիկական պահուստներին բաժին էր ընկնում պարտավորությունների 49.4%-ը, ապա 2014թ.-ի վերջին՝ 67.0%: 31.12.2011թ.-ի դրությամբ պարտավորությունների 7.9%-ը կազմող վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների տեսակարար կշիռը տարեցտարի կնվազի և 31.12.2014թ.-ի դրությամբ կկազմի 5.5%:


Գծապատկեր 4: Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների դինամիկան՝ 2011-2014թթ. համար:



Ապահովագրավճարներ և վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարներ

Ապահովագրական ընկերությունները 2012-14թթ. համար կանխատեսել են ապահովագրավճարների 18.4% միջին տարեկան աճ, ինչի արդյունքում ապահովագրավճարների մեծությունը 2014թ.-ին կկազմի 36.8 մլրդ դրամ 2011թ.-ի 22.2 մլրդ դրամի փոխարեն: Ապահովագրավճարների հիմնական աճը կանխատեսվում է 2012թ.-ին՝ 43.4%, ինչը պայմանավորված է պետական ծառայողների համար սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրության համակարգի ներդրման արդյունքում ապահովագրավճարների աճով:

Գծապատկեր 5: Համախառն և վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների դինամիկա





Վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարները նշված ժամանակաշրջանում տարեկան կաճեն միջինում 15.7%: Վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարները 2014թ.-ի համար կկազմեն 4.3 մլրդ դրամ 2011թ.-ի 2.8 մլրդ դրամի փոխարեն:

Համաձայն կանխատեսումների՝ 2014թ.-ին վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարների տեսակարար կշիռը համախառն ապահովագրավճարների մեջ կկազմի 11.8% 2011թ.-ի 12.6%-ի փոխարեն:

Ինչ վերաբերում է ապահովագրավճարների կառուցվածքին, ապա հարկ է նշել, որ կանխատեսվող ժամանակահատվածում ապահովագրավճարների զգալի մասը բաժին է ընկնում ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությանը: Առողջության ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրավճարները, ապահովելով 78.9% միջին տարեկան աճ, 2014թ.-ին ապահովագրավճարների կառուցվածքում կկազմեն զգալի կշիռ՝ 22.9% (2011թ.՝ 6.6%):

Գծապատկեր 6: Ապահովագրության տարբեր դասերի գծով ապահովագրավճարների տեսակարար կշիռները համախառն ապահովագրավճարների մեջ 2011թ.-ին և 2014թ.-ին:





1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ),

2. Առողջության,

3. Հրդեհից և բնական աղետներից,

4. Ցամաքային տրանսպորտի,

5. Փոխադրվող գույքի (բեռների),

6. Ընդհանուր պատասխանատվության,

7. Աջակցության,

8. Դժբախտ պատահարներից,

9. Գույքին հասցված այլ վնասներից,

10. Ֆինանսական վնասների,

11. Օդանավերի և օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,


12. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն,

13. Վարկի ապահովագրություն:

Ապահովագրական հատուցումներ և վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով

Ապահովագրական ընկերությունները կանխատեսում են ապահովագրական հատուցումների 21.9% միջին տարեկան աճ, ինչի հետևանքով 2014թ.-ին նշված ցուցանիշը կկազմի 14.8 մլրդ դրամ: Ապահովագրական հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվող գումարները տարեկան միջինում կնվազեն 2.5%՝ 2014թ.-ին կազմելով 635.6 մլն դրամ: Ըստ կանխատեսումների՝ վերաապահովագրական ընկերություններից ստացվող հատուցումներն դանդաղ տեմպերով նվազում են, քանի որ ապահովագրական ընկերությունները նախատեսում են վերաապահովագրել մեծամասամբ խոշոր և ցածր հավանականություն ունեցող ռիսկերը:


Գծապատկեր 7: Ապ. հատուցումների և հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվող գումարների դինամիկա




Համաձայն կանխատեսումների՝ 2014թ.-ին ապահովագրական հատուցումների գծով վերաապահովագրողներից ստացվող գումարների տեսակարար կշիռն ընդամենը ապահովագրական հատուցումների մեջ կկազմի 4.3%՝ 2011թ.-ի 8.4%-ի փոխարեն:

Հարկ է նշել, որ ինչպես 2011թ.-ին, այնպես էլ 2014 թ.-ին ապահովագրական հատուցումների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով ապահովագրական հատուցումները՝ 2014թ.-ին համախառն ապահովագրական հատուցումների մեջ կազմելով 58.8% տեսակարար կշիռ: Առողջության ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրական հատուցումները, ապահովելով 60.4% միջին տարեկան աճ, 2014թ.-ին ապահովագրավճարների կառուցվածքում կկազմեն 29.1% (2011թ.՝ 12.8%): Աճը հիմնականում պայմանավորված է պետական ծառայողների համար սոցիալական փաթեթի շրջանակներում առողջության ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրական հատուցումների աճով:

Գծապատկեր 8: Ապահովագրության տարբեր դասերի գծով ապահովագրական հատուցումների տեսակարար կշիռներն համախառն ապահովագրական հատուցումների մեջ 2011թ.-ին և 2014թ.-ին:






1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Աջակցության, 6. Փոխադրվող գույքի (բեռների), 7. Ընդհանուր պատասխանատվության, 8. Ապահովագրության այլ դասեր

<u>Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ</u>

<u>շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո (զուտ շահույթ (զուտ վնաս)) և այլ ցուցանիշներ</u>


2012-2014թթ. կանխատեսվող ժամանակահատվածում ապահովագրական ընկերությունների հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (զուտ վնաս) ցուցանիշը միջին տարեկան կտրվածքով կաճի 19.8%-ով՝ 2014թ.-ին կազմելով 2.9 մլրդ դրամ:

Գծապատկեր 9: Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ (վնաս) ցուցանիշի դինամիկան 2011-2014թթ. համար



Ապահովագրական ընկերությունների համար շարունակելու են եկամտի հիմնական աղբյուր հանդիսանալ ապահովագրական գործունեությունից ստացվող եկամուտները: Ընդ որում՝ կանխատեսվող ժամանակահատվածում ապահովագրական գործունեությունից ստացվող եկամուտները կշարունակեն աճել և առաջիկա երեք տարիներին կկազմեն ավելի մեծ տեսակարար կշիռ:

Գծապատկեր 10: Ապահովագրական ընկերությունների եկամուտների և ծախսերի կառուցվածքի դինամիկա 2011-2014թթ. համար:



2011թ.-ին ապահովագրական ընկերությունների ծախսերի մեծ տեսակարար կշիռ են կազմել զուտ ապահովագրական հատուցումները, որոնք կանխատեսվող ժամանակահատվածում կշարունակեն աճել:

Ապահովագրական ընկերությունները կանխատեսում են տոկոսային եկամուտների 13.7% միջին տարեկան աճ, ինչի արդյունքում 2014թ.-ին տվյալ ցուցանիշը կկազմի 2.8 մլրդ դրամ 2011թ.-ի 1.9 մլրդ դրամի փոխարեն: Տոկոսային եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ կազմող ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներից և դրանց տրամադրված փոխառություններից ստացվող տոկոսային եկամուտները, որոնք 2011թ.-ին կազմել են տոկոսային եկամուտների 64.2%-ը, 2014թ.-ին կանխատեսումների համաձայն կկազմեն 52.9%: 2011թ.-ին ընդհանուր տոկոսային եկամուտներում կազմելով 21.1% տեսակարար կշիռ՝ կաճեն տոկոսային եկամուտները ՀՀ պետական և ոչ պետական արժեթղթերից և 2014թ.-ին կանխատեսումների համաձայն կկազմեն 25.1%:


Ապահովագրական ընկերությունների ոչ տոկոսային եկամուտների ծավալը 2011թ.-ին կազմել է 700.5 մլն դրամ, իսկ 2014թ.-ին համաձայն կանխատեսումների կկազմի 231.1 մլն դրամ:

Ապահովագրական ընկերությունների ոչ տոկոսային ծախսերը տարեկան միջինում կաճեն 9.9%-ով և 2014թ.-ին կկազմեն 8.3 մլրդ դրամ 2011թ.-ի 6.3 մլրդ դրամի փոխարեն: Անձնակազմի գծով ծախսերի տեսակարար կշիռը կմնա անփոփոխ և 2014թ.-ին կկազմի համախառն ոչ տոկոսային ծախսերի 43.4%-ը:

Ապահովագրական ընկերությունները նախատեսում են ուսուցման ծախսերի ավելացում կանխատեսվող ժամանակաշրջանի համար. ուսուցման ծախսերը տարեկան միջինում կաճեն 27.7%-ով և 2014թ.-ին կկազմեն 71.4 մլն դրամ:

Հարկ է նշել նաև, որ ապահովագրական ընկերությունները չեն նախատեսում զգալիորեն ավելացնել գովազդի գծով ծախսերը, ինչպես նախորդ տարում: Դրանք տարեկան միջինում կաճեն 9.1%-ով և 2014թ.-ին կկազմեն 858.1 մլն դրամ կամ համախառն ոչ տոկոսային ծախսերի 10.3%-ը:

Գծապատկեր 11: Վնասաբերության և ծախսատարության ցուցանիշների դինամիկա




Կանխատեսումների համաձայն ապահովագրական ընկերությունների վնասաբերությունը կշարունակի աճել, իսկ ծախսատարությունը կնվազի, ինչը վկայում է ապահովագրական ընկերությունների գործառնական արդյունավետության աճի մասին:


Ապահովագրական ընկերությունների կանխատեսումներով զուտ շահույթ/ակտիվների միջին մեծություն[5] (ROA) և զուտ շահույթ / ընդհանուր կապիտալի միջին մեծություն[6] (ROE) ցուցանիշները 2014թ.-ին համապատասխանաբար կկազմեն 7.1% և 15.9% (2011թ.-ին՝ 5.8% և 12.1%):

Գծապատկեր 12: Ակտիվների և ընդհանուր կապիտալի շահութաբերությունների փոփոխությունները 2011-2014թթ. ընթացքում:

«ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ / ԱԿՏԻՎՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ» ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ



«ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ/ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ» ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ




[5] Ակտիվների միջին մեծությունը հաշվարկելիս ակտիվների տարեսկզբի և տարեվերջի մեծությունների հանրագումարը հարաբերվում է երկուսի:

[6] Ընդհանուր կապիտալի միջին մեծությունը հաշվարկելիս կապիտալի տարեսկզբի և տարեվերջի մեծությունների հանրագումարը հարաբերվում է երկուսի:


Ապահովագրական գումարներ

Ապահովագրական ընկերությունների կանխատեսումների համաձայն՝ 31.12.2014թ.-ի դրությամբ ապահովագրական ընկերությունների գործող ապահովագրության պայմանագրերով ստանձնած ռիսկերի (ապահովագրական գումարների) մեծությունը կկազմի 10.2 տրլն դրամ՝ 2011թ.-ի 4.0 տրլն դրամի փոխարեն: Վերաապահովագրողներին փոխանցվող ռիսկերի (վերաապահովագրական գումարների) մեծությունը շարունակաբար կնվազի 31.12.2014թ. կազմելով ընդհանուր ապահովագրական գումարների 27.1%-ը (2011թ.՝ 43.0%):

Գծապատկեր 13: Ապահովագրական և վերաապահովագրական գումարների դինամիկան 2011-2014թթ.-ի համար



Գծապատկեր 14: Տարբեր դասերի գծով ապահովագրական գումարների տեսակարար կշիռներն ընդամենը ապահովագրական գումարների մեջ 2011թ.-ին և 2014թ.-ին:



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն, 2. Հրդեհից և բնական աղետներից, 3. Աջակցության, 4. Առողջության, 5. Ընդհանուր պատասխանատվության, 6.Փոխադրվող գույքի (բեռների), 7. Գույքին հասցված այլ վնասներից, 9. Դժբախտ պատահարներից, 10. Ապահովագրության այլ դասեր:

ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում ապահովագրական ընկերությունը նախատեսում են շարունակել համագործակցությունը առկա վերաապահովագրական ընկերությունների հետ, ինչպես նաև ապահովագրության նոր դասերի ներդրման և ռիսկերի տեղաբաշխումն ավելի դիվերսիֆիկացնելու նպատակով՝ բանակցել մի շարք նոր վերաապահովագրողների հետ: Ռիսկերի վերաապահովագրությունը կամ վերաապահովագրական գումարների տեսակարար կշիռն ընդհանուր ապահովագրական գումարներում 2012-2012թթ.-ին կունենա նվազման միտում՝ պայմանավորված հետևյալ հանագամանքներով.

Ընդհանուր կապիտալի շարունակական աճ, որը տեղի կունենա չբաշխված շահույթի աճի հաշվին, և հնարավորություն կտա ընկերություններին ընդհանուր ապահովագրական գումարներում ունենալ առավել մեծ սեփական մասնակցության կշիռ՝ չխախտելով ապահովագրական ընկերությունների $Ն_3$ նորմատիվը[7]:

ԱՊՊԱ-ի գծով ստանձնած ռիսկերի աճը կտրուկ կմեծացնի ապահովագրական գումարների ընդհանուր ծավալը, և քանի որ ընկերությունները մտադիր չեն լայնածավալ վերաապահովագրություն անել նշված ռիսկի գծով, ապա վերաապահովագրության կշիռը կնվազի:

Վերաապահովագրության քաղաքականության կատարելագործում, ինչն ընկերություններին հնարավորություն կտա վերաապահովագրության ոչ համամասնական բնույթի պայմանագրեր կնքել և նվազեցնել վերաապահովագրության ծավալները:

[7] Ըստ կանոնակարգ 3/02-ի (*«Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման եվ հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները»*) ստանձնած ապահովագրական մեկ ռիսկի առավելագույն չափի նորմատիվով (Ն3 նորմատիվ) մեկ ապահովագրական ռիսկի և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը սահմանվում է 10%-ով:

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

- Որոշ ընկերությունների դատողություններում հակասություն կա, մասնավորապես՝ նշելով ֆինանսական ճգնաժամի բացասական հնարավոր հետևանքները և կամավոր ապահովագրության դանդաղ աճը, միաժամանակ կանխատեսում են ապահովագրավճարների և շահութաբերության զգալի աճ:

- Ապահովագրական ընկերութուններից շատերը դեռևս չեն լուծել անհրաժեշտ ծրագրային ապահովման հարցը:

- Ընկերություններից շատերի համար եկամտի ստացման հիմնական աղբյուր շարունակում են մնալ ապահովագրավճարներից ստացվող մուտքերը:

- Ապահովագրական ընկերությունների մեծ մասը պլանավորում է ավելացնել սեփական պահումներն ի հաշիվ վերաապահովագրությանը փոխանցվող ռիսկերի նվազեցման: Որոշ ընկերություններ դրան զուգահեռ պատրաստվում են ապահովագրության որոշ դասերի գծով անցում կատարել ոչ համամասնական եղանակով վերաապահովագրության կիրառմանը: Սակայն կան ընկերություններ, որոնք առանց հստակ վերաապահովագրական քաղաքականության և առանց պատճառների հիմնավորման պարզապես նվազեցնելու են վերաապահովագրությանը փոխանցվող ռիսկերի մեծությունը: Սա կարող է խաթարել ապահովագրական ընկերությունների վճարունակությունը:

- Ապահովագրական ընկերություններից քչերն են պատկերացնում ռիսկերի կառավարման գործընթացը և հիմնականում ռիսկերի կառավարման հստակ մեխանիզմներ չունեն, սակայն նախորդ տարիների համեմատ ավելացել է այն ընկերությունների թիվը, որոնք ներդրել և կիրառել են ռիսկերի գնահատման և սթրես-թեստավորման մեթոդներ:

- Ընկերությունները հեշտության համար և նպատակ ունենալով չխախտել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվները՝ նախընտրում են ներդրումներ իրականացնել հիմնականում բարձր իրացվելի ակտիվներում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2011-2014թթ. ՀԱՄԱՐ

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012	2013	2014
Ակտիվներ, այդ թվում՝	**31,406,606**	**33,034,074**	**37,837,842**	**42,197,676**
ավանդներ բանկերում	*14,841,891*	*15,664,910*	*18,343,851*	*21,062,633*
արժեթղթեր	*5,138,985*	*6,945,496*	*8,276,147*	*8,926,931*
ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով	*2,466,210*	*1,968,038*	*2,078,711*	*2,235,355*
Տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժինը	*1,888,924*	*1,535,297*	*1,681,509*	*1,859,107*
Պարտավորություններ, այդ թվում՝	***17,490,182***	***18,944,835***	***21,007,747***	***23,158,650***
ապահովագրական պահուստներ	*8,646,185*	*11,988,884*	*13,753,807*	*15,519,431*
վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	*1,377,566*	*1,101,906*	*1,189,868*	*1,276,983*
Ընդհանուր կապիտալ, այդ թվում՝	**13,916,425**	**14,089,239**	**16,830,093**	**19,039,027**
կանոնադրական կապիտալ	*11,489,892*	*10,151,912*	*10,151,912*	*10,151,912*
չբաշխված շահույթ	*1,528,491*	*3,152,050*	*5,798,012*	*7,880,450*
Ապահովագրավճարներ ոչ կյանքի ապահովագրության գծով	**22,194,026**	**28,700,002**	**33,244,077**	**36,835,642**
Վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարներ ոչ կյանքի ապահովագրության գծով	**2,802,646**	**3,537,864**	**3,974,096**	**4,337,407**
Ապահովագրական հատուցումներ ոչ կյանքի ապահովագրության գծով	**8,140,988**	**10,634,246**	**13,122,849**	**14,762,451**
Վերաապահովագրողներից ստացվող գումարներ ոչ կյանքի ապահովագրության ապահովագրական հատուցումների գծով	**685,498**	**569,942**	**551,427**	**635,624**
Տոկոսային եկամուտներ, այդ թվում՝	**1,875,225**	**2,146,488**	**2,440,113**	**2,758,577**
տոկոսային եկամուտներ ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներից և դրանց տրամադրված փոխառություններից	*1,203,093*	*1,160,551*	*1,281,314*	*1,459,195*
տոկոսային եկամուտներ պետական արժեթղթերից	*385,868*	*509,400*	*608,687*	*691,495*
Տոկոսային ծախսեր	**114,011**	**88,751**	**92,825**	**97,643**
Ոչ տոկոսային եկամուտներ	**700,452**	**206,100**	**218,205**	**231,125**
Ոչ տոկոսային ծախսեր, այդ թվում՝	**6,277,094**	**7,080,841**	**7,631,901**	**8,324,183**
աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	*2,699,568*	*3,166,177*	*3,358,932*	*3,612,655*
ուսուցման ծախսեր	*34,270*	*59,187*	*65,100*	*71,393*
գովազդի գծով ծախսեր	*661,545*	*704,925*	*786,257*	*858,084*
Շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	**1,661,417**	**1,523,899**	**2,475,397**	**2,856,695**
Շահաբաժիններ	**9,822**	**391,940**	**341,940**	**441,940**
Ոչ կյանքի ապահովագրության գծով գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ	**4,017,338,830**	**7,834,845,349**	**9,147,195,758**	**10,162,331,002**
Ոչ կյանքի ապահովագրության գծով գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված վերաապահովագրական գումարներ	**1,730,007,359**	**2,016,560,877**	**2,488,958,226**	**2,753,966,270**
Կապիտալի համարժեքության նորմատիվ	**192.1%**	**196.6%**	**207.2%**	**213.5%**
Վարչական աշխատողների թիվ (հոգի)	**992**	**1,137**	**1,193**	**1,238**
Սպասարկող աշխատողների թիվ (հոգի)	**43**	**52**	**61**	**70**

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ 2011-14ԹԹ. ՀԱՄԱՐ

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Ապահովագրավճարներ				Վերաապահովագրողներին փոխանցվող ապահովագրավճարներ			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	314,355	325,822	359,520	394,776	36,821	34,499	37,108	39,887
Առողջության ապահովագրություն	1,475,060	6,643,550	7,757,561	8,439,446	590	-	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	1,506,159	1,844,865	2,092,324	2,410,396	394,439	443,143	488,697	566,858
Օդանավերի ապահովագրություն	43,499	43,499	46,109	48,875	30,900	30,900	32,755	34,720
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	534,431	614,729	688,750	770,005	266,828	311,537	343,145	377,437
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	1,908,040	2,643,303	3,135,935	3,421,963	1,312,297	1,958,436	2,276,572	2,472,297
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	235,981	263,200	315,840	379,008	70,897	74,469	86,363	100,186
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	35,534	54,734	60,159	66,198	18,544	13,875	14,774	15,701
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	14,729,842	14,764,400	17,197,269	19,196,461	-	-	-	-
Օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	136,920	137,885	146,158	154,927	133,559	119,198	126,350	133,931
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	464,207	502,986	566,575	638,091	232,914	235,332	255,835	278,504
Երաշխիքի տրամադրում	-	-	-	-	-	-	-	-
Վարկի ապահովագրություն	85,457	-	-	-	-	-	-	-
Ֆինանսական վնասների ապահովագրություն	364,448	401,846	372,000	353,587	232,298	214,247	201,941	198,281
Աջակցության ապահովագրություն	360,093	459,185	505,876	561,910	72,558	102,228	110,558	119,607

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ 2011-14ԹԹ. ՀԱՄԱՐ

հազար դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Ապահովագրական հատուցումներ				Վերաապահովագրողներից ստացվող գումարներ ապահովագրական հատուցումների գծով			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	29,419	25,810	27,865	29,929	6,849	1,749	807	890
Առողջության ապահովագրություն	1,042,464	2,748,600	3,923,946	4,302,467	-	-	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	966,335	868,746	992,863	1,144,481	379,657	197,364	221,371	257,009
Օդանավերի ապահովագրություն	-	-	-	-	-	-	-	-
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	43,453	59,656	73,817	96,200	32,615	45,608	48,801	64,909
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	195,763	253,844	252,873	270,932	155,889	235,141	223,453	238,507
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	1,899	3,702	8,993	22,166	391	1,500	5,400	13,325
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	12,489	8,459	13,916	15,569	5,350	2,892	1,582	1,708
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	5,531,225	6,382,692	7,669,981	8,687,291	-	-	-	-
Օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	-	-	-	-	-	-	-
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	91,011	48,075	28,156	43,927	6,523	29,898	8,695	10,836
Վարկի ապահովագրություն	15,015	108,180	-	-	-	-	-	-
Երաշխիքի տրամադրում	4,875	-	-	-	-	-	-	-
Ֆինանսական վնասների ապահովագրություն	126,535	33,988	29,193	36,624	83,687	27,704	15,754	20,361
Աջակցության ապահովագրություն	80,504	92,495	101,245	112,865	14,537	28,085	25,564	28,078

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻ 2011-14ԹԹ. ՀԱՄԱՐ

մլն դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարներ				Գործող ապահովագրության պայմանագրերով նախատեսված վերաապահովագրական գումարներ			
	2011	2012	2013	2014	2011	2012	2013	2014
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	107,785	120,665	134,478	148,758	25,840	16,348	17,599	18,977
Առողջության ապահովագրություն	68,950	441,949	491,827	537,017	-	-	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	66,111	73,244	83,033	95,404	25,008	26,974	29,880	33,803
Օդանավերի ապահովագրություն	4,848	5,093	5,348	5,616	4,848	5,093	5,348	5,616
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	120,446	152,917	174,294	197,347	100,141	115,987	132,331	149,867
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	1,230,583	1,534,276	2,101,168	2,346,412	1,091,781	1,308,388	1,707,960	1,891,388
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	107,096	123,083	147,699	177,239	72,036	83,577	99,412	117,180
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	16,605	26,552	28,923	31,696	11,329	7,740	8,126	8,562
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1,667,496	4,502,526	5,039,855	5,575,937	-	-	-	-
Օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	849	892	936	983	849	892	936	983
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	248,012	245,666	271,411	299,256	226,986	219,403	239,972	262,585
Վարկի ապահովագրություն	1,709	-	-	-	-	-	-	-
Երաշխիքի տրամադրում	19	19	20	21	-	-	-	-
Ֆինանսական վնասների ապահովագրություն	48,444	44,172	40,441	37,419	46,767	36,287	33,325	30,990
Աջակցության ապահովագրություն	328,387	563,791	627,763	709,225	124,424	195,871	214,068	234,015